

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 6-01.61.01 «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 6-01.61.01.01-3 «ՓԱԿԱՆԱԳՈՐԾ՝ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ»
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՆՕՐԵՆ

(ազգանուն, անուն)

« ____ » _____ 200_թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

6-01.61.01 «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտության 6-01.61.01.01-3 «Փականագործ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգման» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՄԱՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ
որակավորման անվանումը

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ նախնական մասնագիտական
(արհեստագործական)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝ «Փականագործ»
ցյուղատնտեսական մեքենաների և արքավրդումների նորոգման»

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ՝ միջնակարգ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 1 տարի

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ՝ առկա

I. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

[illegible]

□

Տեսական
ուսուցում

0

Ուսումնա-կան
պրակտիկա
տեսական
ուսուցմամբ



Ուսումնական
պրակտիկա
առանց տեսական
ուսուցման

X

Նախաավարտական,
արտադրական
պրակտիկա

••

Մոդուլների
ամփոփում

Նախապատրաստում
ամփոփիչ պետական
ատեստավորման

III

Ամփոփիչ
պետական
ատեստավո-
րում

$$=$$

Արձակուրդ

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների							
		Քննութ.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս	
					Ընդամենը	Այդ թվում		1-ին կիս	2-րդ կիս	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.	7-րդ կիս.	8-րդ կիս
						Տեսակ. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք	շաբ	շաբ	շաբ	շաբ.	շաբ.	շաբ.	շաբ.
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		ս		72	14	58					72			
1.2	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		ս		18	10	8					18			
1.3	Իրավունքի հիմունքներ		ս		36	18	18					36			
1.4	Պատմություն		ս		36	18	18					36			
1.5	Օտար լեզու		ս		60		60					60			
1.6	Ֆիզիկական կուլտուրա		ս		66	4	62					66			
1.7	Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ		ս		36	18	18					36			
1.8	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		ս		18	10	8					18			
	ԸՆԴԱՄԵՆԸ				342	92	250								
2.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
2.1	Հաղորդակցություն		ս		36	8	28					36			
2.2	Անվտանգություն և առաջին օգնություն		ս		36	20	16					36			
2.3	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		ս		18	6	12					18			
2.4	Համակարգչային օպերատորություն		ս		36	12	24					36			
	ԸՆԴԱՄԵՆԸ				126	46	80								
3.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ														
3.1	Մեքենաշինական գծագրություն		ս		36	8	28					36			
3.2	Թույլտվածքներ և նստեցվածքներ, չափիչ	ք	ս		36	18	18					36			

[illegible]

	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ				100											
	ՊՐԱԿՏԻԿԱ	6														
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	1														
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ	1														
	ԸՆԴԱՄԵՆԸ	41/8/											612	576		
	Շաբաթվա ժամերի քանակը															

	IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ	
1	Լոգիստիկա				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ	
2	Տրանսպորտային սերվիս			1	հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների	
				2	օտար լեզվի	
				3	ընդհանուր հումանիտար,սոցիալ-տնտեսագիտական և բնագիտական առարկաների	
				4	փականգործական սարքավորումների	
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքի	
				6	անհատական համակարգիչների	
				7	ճանապարհային երթևեկության կանոնների և տրակտորի գործնական վարման հմտությունների,	
1	Արտադրական	2	6			
	ԸՆԴԱՄԵՆԸ		6			
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ՝ 2-րդ կիսամյակում Հունիսի 22-28 ժամանակահատվածում: Համալիր քննություն մասնագիտական մոդուլներից՝ Ներքին այրման շարժիչի տեխնիկական սպասարկման և նորոգման հմտություններ, Տրակտորի ընդհանուր կառուցվածք, տեխնիկական սպասարկում և նորոգում, Հողի մշակման և պարարտացման մեքենաների կառուցվածք, տեխնիկական սպասարկում և նորոգում, Ցանիչ և տնկիչ մեքենաների կառուցվածք, տեխնիկական սպասարկում և նորոգում, Բույսերի խնամքի և քիմիական պաշտպանության մեքենաների կառուցվածք, տեխնիկական սպասարկում և նորոգում, Բերքահավաքի և կերերի կուտակման մեքենաների կառուցվածք, տեխնիկական սպասարկում և նորոգում:						ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
					1	Նյութագիտության
						ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ
					1	փականագործական աշխատանքների
						գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տեխնիկական սպասարկման և նորոգման
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ	

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը հաստատությունը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»		
1.	Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-13-001
2.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
5.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
6.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
7.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
8.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:

9.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաչադրվեն իրավիճակային խնդիրներ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:
10.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
11.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
12.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
13.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
14.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
15.	Մեթոդաբանությունը և	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	ռեսուրսները	մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
16.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
17.	Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
18.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
19.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և ճշգրտությամբ կատարում հանձնարարությունները:
20.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

21.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
22.	Ուսումնառության արդյունք 4	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
23.	Կատարման չափանիշներ	1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հաստատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
24.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
25.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական միջոցներ:
26.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
27.	Ուսումնառության արդյունք 5	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար

28.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
29.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել ընտրված գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
30.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	հաղորդակցման տեխնիկական սարքեր:
31.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ		
32.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-3-13-001
33.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների

		դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
34.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
35.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
36.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4. ցուցաբերի առաջին օգնություն:
37.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
38.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
39.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
40.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չափապանելու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները 1. անվտանգության հիմնական կանոնները ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, 2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները,

		պատասխանատվությունը, 3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը: 5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
41.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:
42.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
43.	Ուսումնառության արդյունք 2	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
44.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
45.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

46.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, իրավիճակային խնդիրներ, անվտանգության անահատական միջոցներ:
47.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
48.	Ուսումնառության արդյունք 3	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
49.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
50.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
51.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, անվտանգության անահատական միջոցներ:
52.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ

53.	Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
54.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
55.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում նկարագրել) առաջին օգնության գործողություններ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում ելնելով առաջացած ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:
56.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
57.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
58.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-13-001
59.	Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների

		ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
60.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
61.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
62.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների. 2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ. 3. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ. 4. դրսևորի թիմում արդյունավետ աշխատելու կարողություն.
63.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
64.	Ուսումնառության արդյունք 1	Փնտրել և գտնել աշխատանք
65.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական, աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը առաջարկվող աշխատատեղին, 5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
66.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բանավոր ներկայացնում իր կենսագրությունը:
67.	Մեթոդաբանությունը և	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	ռեսուրսները	մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
68.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ , գործնական աշխատանք՝ 2 ժամ
69.	Ուսումնառության արդյունք 2	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
70.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, 2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստականությունը և տրամադրվածությունը, 3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, 4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստականություն և պատասխանատվության դրսևորումներ, 5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
71.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ հարցերի առնվազն 70 %-ին:
72.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
73.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 1 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
74.	Ուսումնառության արդյունք 3	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
75.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, 4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
76.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ

		հարաբերություն դրսևորելու և լուծումներ առաջարկելու կարողություն:
77.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
78.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 1 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
79.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
80.	Կատարման չափանիշներ	1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, 4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
81.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում պատշաճ հարաբերություն դրսևորելու կարողություն:
82.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:
83.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»		
84.	Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-13-001
85.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և

		անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
86.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
87.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
88.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) պարզաբանի տեքստային խմբագրման համակարգչային ծրագիրը, 2) կատարի տեքստերի խմբագրում և տարրական ֆորմատավորում, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակներ, 5) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում, 6) կատարի փաստաթղթերի տպագրում, տեղեկատվական նյութի պատրաստում ցուցադրության համար: 7) կատարի աշխատանքներ համացանցում:
89.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
90.	Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
91.	Կատարման չափանիշներ	1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ , պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):

92.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ, որը պետք է պարունակի մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ: Ուսանողը Microsoft Word ծրագրում բացելով նոր փաստաթուղթ պետք է մուտքագրի առաջադրված տեքստը, ամրագրելով համակարգչի հիշողության մեջ փակի փաստաթուղթը, բացել առկա փաստաթուղթը, ցույց տա Zoom գործիքի հնարավորությունները
93.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
94.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
95.	Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
96.	Կատարման չափանիշներ	1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
97.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով տեքստային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա մուտքագրել տեքստ հայերեն և օտար լեզվով, նշի որոշ բառերը և տեքստային հատվածներ, կատարի մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում, տողերի հավասարեցում, փոխի միջտողային տարածությունները, տեքստի գույնը Font Color գործիքով, գունային ֆոնը Highlight գործիքով, պարբերության խորությունները լուսանցքներից, չեղյալ հայտարարի կատարած գործողությունները, վերականգնի նախկին նյութը,

		պատճենի, տեղափոխի, համարակալի տեքստը և այլն: Արդյունքի յուրացումը գնահատվում է դրական, եթե ուսանողը առնվազն 80%-ով ճիշտ է իրականացնում բոլոր գործողությունները:
98.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
99.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
100.	Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
101.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
102.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել 1 էջ ծավալով աղյուսակային նյութ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա պատրաստել աղյուսակ, աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ, կատարի ուղղումներ ու լրացումներ, ավելացնի նոր տողեր և նոր սյուներ, ջնջի աղյուսակի տողերը և սյուները, փոխել սյունակի լայնությունը և բարձրությունը Մկնիկի օգնությամբ, փոխի աղյուսակի գծերի գույնը, գունավորի աղյուսակի տողը և սյունը:
103.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
104.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
105.	Ուսումնառության արդյունք 4	Գրաֆիկական խմբագրում և նկարագարում
106.	Կատարման չափանիշներ	1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,

		2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
107.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ գրաֆիկական օբյեկտ: Ուսանողը Microsoft Word ծրագրում պետք է կարողանա գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գծագրել կանոնավոր պատկերներ, ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով, խմբավորել գրաֆիկական օբյեկտները, հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ, գծագրել տեքստային բլոկներ, գունավորել երանգավորել ստվերավորել գրաֆիկական օբյեկտները,
108.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
109.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
110.	Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
111.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
112.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Microsoft Word

		ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել որևէ պատրաստի նյութ: Պետք է կարողանա նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը, տպագրել փաստաթուղթը:
113.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
114.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
115.	Ուսումնառության արդյունք 6	Համացանցում աշխատելու հմտություն
116.	Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է <<համացանց>> հասկացությունը, 2) օգտագործում է համացանցային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , համացանցային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
117.	Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական կատարման միջոցով: Գործնական կատարման միջոցով հնարավոր կլինի գնահատել ուսանողի աշխատելու կարողությունները Internet Explorer ծրագրի միջավայրում, դրա համար պետք է ուսանողին տրամադրել ինտերնետի մուտքով համակարգիչ: Ուսանողը պետք է կարողանա ցույց տալ History, Favorites, Stop, Refresh, Back և Forward հրամանների օգտագործման կարողությունները, որոնի, գտնի, պատճենի տարաբնույթ ինֆորմացիա ինտերնետային էջից, կարողանա էլեկտրոնային հասցե բացել, ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:
118.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
119.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՔԵՆԱՇԻՆԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

1.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-001
2.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել մասնագիտական աշխատանքային գծագրեր և էսքիզներ կարդալու և հասկանալու, ինչպես նաև տիպային մեքենամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր կատարելու անհրաժեշտ կիրառական գիտելիքներ և հմտություններ:
3.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
4.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
5.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է ` 1) կատարի եկրաչափական կառուցումներ, տիպային մեքենամասերի կտրվածքներ, էսքիզներ և աշխատանքային գծագրեր, 2) կարդա մեքենամասերի աշխատանքային գծագրերը, մեկնաբանի մասշտաբները, տեխնիկական պայմանները և պայմանական նշանները, 3) կարդա հանգույցների ու մեքենամասերի հավաքական գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը:
6.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
7.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել տիպային մեքենամասերի էսքիզներ և աշխատանքային գծագրեր
8.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում երկրաչափական կառուցումները հարթության վրա՝ կորերի լծորդում, փոխուղղահայաց ուղիղների կառուցում, եռանկյունների կառուցում կորդինատներով և այլն, 2) ճիշտ է կատարում տիպային մեքենամասերի պրոյեկտումը հարթությունների վրա և պատկերում դրանց երեք պրոյեկցիաները, 3) ճիշտ է տալիս կտրվածքներ և պատկերում է առաջադրված տիպային մեքենամասերի աշխատանքային գծագրերը և էսքիզները, 4) ճիշտ է պատկերում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա տիպային մեքենամասերի չափերը, 5) ճիշտ է կատարում տիպային մեքենամասի բնօրինակից համապատասխան էսքիզը և աշխատանքային գծագիրը:

9.	Գնահատման միջոցը	Սովորողին կտրվեն երկու մեքենամասի մոդելներ և կհանձնարարվի նրանցից մեկի համար մշակել աշխատանքային գծագիրը՝ կառուցելով տվյալ մեքենամասի երեք պրոյեկցիաները համապատասխան կտրվածքներով, մեքենամասի չափադրումներով, ինչպես նաև մեքենամասի տարածական գծագիրը, իսկ մյուսի համար կատարել էսքիզը: Արդյունքը համարվում է ձեռք բերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:
10.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով: Այդ աշխատանքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, գծագրական գործիքներ, գծագրության համար հարմարեցված սեղաններ և շարժական քանոններ, տարբեր մեքենամասերի հավաքածուներ, համապատասխան գրականություն, ծավալային տարբեր մոդելներ:
11.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 4 ժամ, Գործնական աշխատանք 8 ժամ
12.	Ուսումնառության արդյունք 2	Կարդալ աշխատանքային գծագրերը և էսքիզները
13.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված չափերի թույլտվածքները և մաքրության դասերի նշանակումները, 2) ճիշտ է ներկայացնում աշխատանքային գծագրերի և էսքիզների վրա պատկերված մակերևույթների ձևի թույլատրելի շեղումները, 3) ճիշտ է բացատրում աշխատանքային գծագրերի և էսքիզի վրա ներկայացված տեխնիկական պայմանները, 4) ճիշտ է բացատրում աշխատանքային գծագրերի կամ էսքիզի վրա պատկերված երիթի, բազմաերիթի, ատամնաանիվի, տարբեր նշանակության առվակների, երեսակների և նմանատիպ այլ տարրերի նշանակումները:
14.	Գնահատման միջոցը	Սովորողին կտրվի որևէ մեքենամասի աշխատանքային գծագիրը և դրա վերաբերյալ թեսթային հարցաշարը, բաղկացած ոչ պակաս քան 15 հարցից: Արդյունքը համարվում է ձեռք բերված եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի առնվազն 75% հարցերին:
15.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, մեքենամասերի և աշխատանքային գծագրերի ու էսքիզների հավաքածուներ, համապատասխան գրականություն:
16.	Ուսուցման երաշխավորված	Տեսական պարապմունք 2 ժամ,

	Ժամաքանակը	Գործնական աշխատանք 10 ժամ
17.	Ուսումնառության արդյունք 3	Կարդալ հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը
18.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին մեքենամասերի դիրքավորման նշանակումները, 2) ճիշտ է բացատրում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնաանվային կառչում, առանցքակալային նստեցվածք, եռակցման միացություն և նմանատիպ այլ նշանակումներ, 3) ճիշտ է բացատրում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները, 4) ճիշտ է բացատրում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, կարողանում է օգտվել գծագրերի փաթեթից և հավաքական գծագրից ընտրել համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը, 5) ճիշտ է ներկայացնում հավաքական գծագրի տեխնիկական պահանջները:
19.	Գնահատման միջոցը	Սովորողին կտրվի հավաքական գծագիր իր մասնագրերով և դրանց վերաբերյալ թեսթային հարցաշարը, բաղկացած ոչ պակաս քան 15 հարցից: Այնուհետև ուսանողին հանձնարարվում է կատարել հավաքական գծագրի մեքենամասերից մեկի էսքիզը: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի առնվազն 75% հարցերին և ճիշտ կատարել հանձնարարված մեքենամասի էսքիզը:
20.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, գծագրական գործիքներ, գծագրության համար հարմարեցված սեղաններ և շարժական քանոններ, հավաքական գծագրերի և դրանց մասնագրերի հավաքածուներ, համապատասխան գրականություն:
21.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 2 ժամ, Գործնական աշխատանք 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԹՈՒՅԼՏՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐ, ՉԱՓԻՉ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ»		
22.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-002
23.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ մեքենամասերի մակերևույթների մշակման ճշտության, մաքրության ու որակի, մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերի, թույլտվածքների և նստեցվածքների, ճշտության դասերի, հիմնական չափագիտական հասկացությունների վերաբերյալ, ինչպես նաև գործնական

		կարողություններ, կատարելու մեքենաշինության մեջ օգտագործվող հիմնական չափիչ գործիքներով համապատասխան չափումներ:
24.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
25.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՄՆՓ-3-13-001 «Մեքենաշինական գծագրություն» մոդուլը:
26.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝ 1) տարբերակի հանգույցամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը, տարբերակի ճշտության պայմանական նշանները: 2) կարողանա օգտվել թույլտվածքների աղյուսակներից: 3) տիրապետի չափումների տեխնիկային՝ արդյունավետ աշխատելով հիմնական չափիչ ու չափանշման գործիքներով:
27.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
28.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել մեքենամասերի չափերի թույլտվածքների և նստեցվածքների համակարգը
29.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները, 2) ճիշտ է բացատրում մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը, 4) ճիշտ է բացատրում մեքենամասի նոմինալ, սահմանային և իրական չափերը:
30.	Գնահատման միջոցը	Սովորողին կտրվի մեքենայի որևէ հանգույցի գծագիր և այդ հանգույցի մեքենամասերի միացություններին ներկայացվող տեխնիկական և տեխնոլոգիական պահանջները: Այնուհետև սովորողին հանձնարարվում է բացատրել մեքենամասերի մշակման ճշտությունը կանխորոշող պայմանները, մշակվող մեքենամասերի մաքրությանը և որակին ներկայացվող հիմնական պահանջները, մեքենամասերի համափոխարինելիության սկզբունքը: Ուսանողը կատարում է տրված հանգույցի միացությունների չափագրում, նշելով մաքրության դասերը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները:
31.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել հավաքական գծագրերի և դրանց մասնագրերի

		հավաքածուներ, համապատասխան գրականություն:
32.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 4 ժամ, Գործնական աշխատանք 4 ժամ
33.	Ուսումնառության արդյունք 2	Օգտվել թույլտվածքների աղյուսակներից
34.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է սահմանում թույլտվածք և նստեցվածք հասկացությունները, չափերի շեղումները (վերին, ներքին և իրական) և բացատրում ի՞նչ են բացակն ու ձգվածքը, 2) ճիշտ է մեկնաբանում թույլտվածքների համակարգը և սահմանում վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները, 3) ճիշտ է օգտվում թույլտվածքների աղյուսակներից, 4) ըստ տրված գծագրի կամ խնդրի պայմանի ճիշտ է հաշվարկում լիսեռի թույլտվածքը, անցքի թույլտվածքը և հնարավոր նվազագույն բացակը կամ ձգվածքը:
35.	Գնահատման միջոցը	Սովորողին հանձնարարվում է սահմանել թույլտվածք և նստեցվածք, չափերի շեղումներ, բացակ ու ձգվածք հասկացությունները, մեկնաբանել թույլտվածքների համակարգը և բացատրել վերջինս լիսեռի ու անցքի համակարգերի բաժանման հատկանիշները, թույլտվածքների համակարգի ճշտության աստիճանները: Սովորողին կտրվի մեքենայի որևէ հանգույցի գծագիր ու որոշակի տեխնիկական պահանջներ և կպահանջվի հաշվարկել լիսեռի և անցքի թույլտվածքները և հնարավոր նվազագույն բացակը:
36.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համարԱյդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել թույլտվածքների աղյուսակներ, տեխնիկական պահանջներ ներկայացնող փաստաթղթեր, հանգույցի հավաքական գծագիր, հաշվիչ տեխնիկա, համապատասխան գրականություն, անհրաժեշտ տեղեկություններ:
37.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 6 ժամ, Գործնական աշխատանք 6 ժամ
38.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել չափումներ հիմնական չափիչ գործիքներով
39.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում, չափումը և սահմանում օգտագործվող ժամանակակից չափման միավորները, 2) ճիշտ է ներկայացնում չափման մեթոդները և դրանց իրականացման եղանակները,

		3) ճիշտ է բացատրում ծողակարկինի կառուցվածքը և դրանով իրականացնում է հանձնարարված չափումները, 4) ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափաձողից ու բացատրում վերջիններիս չափելու ճշտությունը, 5) ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից:
40.	Գնահատման միջոցը	Արդյունքի ձեռքբերումը ստուգելու նպատակով կտրվեն մեծությունների չափման, միավորների, չափման մեթոդների և դրանց իրականացման եղանակների, չափիչ գործիքների կառուցվածքի, չափելու ճշտության վերաբերյալ առաջադրանքներ: Սովորողին կտրվեն տարբեր տեսակի մեքենամասեր և կպահանջվի ծողակարկինի, միկրոմետրի, չափաձողի, ունիվերսալ անկյունաչափի, կալիբրների, բացակաչափի, շաբլոնների և պարուրակաչափերի օգնությամբ չափել տրված մեքենամասերի հանձնարարվող մեծությունները, գնահատել չափման ճշտությունները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցվում է համապատասխան ստուգման թերթիկներում:
41.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեքենամասեր, չափիչ գործիքներ, դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ, համապատասխան գրականություն:
42.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 8 ժամ, Գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»		
43.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-003
44.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ սև և գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների և կիրառության բնագավառների վերաբերյալ, ինչպես նաև մետաղների, համաձուլվածքների, նախապատրաստվածքների պրոֆիլները ճանաչելու, մակնիշավորման սկզբունքները գործնականում օգտագործելու կարողություններ:
45.	Մոդուլի տևողությունը	36 ժամ
46.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
47.	Ուսումնառության	Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է `

	արդյունքները	1) դասակարգի թուջերը և պողպատները, մեկնաբանի դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները. 2) ներկայացնի թուջերի և պողպատների մակնշումը. 3) բնութագրի գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքները, դասակարգի, մակնշի, 4) բնութագրի պոլիմերային և կերամիկական նյութերը,դասակարգի և մակնշի. 5) դասակարգի պրոֆիլները, մակնշի, օգտվի պրոֆիլների ստանդարտներից:
48.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովվումն է:
49.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել թուջերի և պողպատների դասակարգումը, դրանց կիրառման բնագավառը և հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները
50.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի կառուցվածքը, որպես երկաթ-ածխածնային միացություն, և բացատրում դրանց դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրությունը, կարծրությունը, կռելիությունը, պլաստիկությունը և այլ հատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում պողպատների և թուջերի կիրառումը, ելնելով նրանց հիմնական ֆիզիկամեխանիկական հատկություններից, 4) ճիշտ է ճանաչում և տարբերում մետաղների նմուշների կտրվածքներով՝ թուջերը, և պողպատները, 5) ճիշտ է որոշում փականագործական գործիքներով, սարքավորումներով պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները:
51.	Գնահատման միջոցը	Սովորողին հանձնարարվում է սահմանել պողպատների և թուջերի, որպես երկաթ ածխածնային միացության, կառուցվածքային էությունը և դասակարգել դրանք, բացատրել պողպատների և թուջերի հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ ամրություն, կարծրություն, կռելիություն, պլաստիկություն և ներկայացնել դրանց կիրառման բնագավառը: Սովորողին կտրվեն մետաղների տարբեր նմուշներ և կպահանջվի ճանաչել և տարբերել թուջերը, և պողպատները, ձեռքի փականագործական գործիքներով գնահատել պողպատի և թուջի բացարձակ և համեմատական ամրությունները և կարծրությունները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ

		պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
52.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար անհրաժեշտ է օգտագործել կոտրատված մետաղների տարբեր նմուշներ, ձեռքի փականագործական գործիքներ, չափիչ գործիքներ, դիտակտիվ նյութեր, չափորոշիչներ, համապատասխան գրականություն:
53.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, Գործնական աշխատանք՝ 6 ժամ
54.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել թուջերի և պողպատների մակնշավորումը
55.	Կատարման չափանիշներ	1)ճ ճիշտ է ներկայացնում պողպատների մակնշավորումը, 2) ճիշտ է ներկայացնում թուջերի մակնշավորումը, 3) ճիշտ է վերծանում պողպատների և թուջերի մակնիշները:
56.	Գնահատման միջոցը	Սովորողի գիտելիքները ստուգելու նպատակով կպահանջվի ներկայացնել պողպատների և թուջերի մակնիշավորուման մեթոդիկան, կտրվի մետաղի կտորների նմուշներ ու կպահանջվի վերծանել դրանց մակնիշները: Գիտելիքների ստուգումը կկատարվի հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը տալիս է հստակ և ճիշտ պատասխաններ: Աշխատանքի կատարումը գրանցելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
57.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ պողպատների և թուջերի մակնիշավորուման, մակնիշների վերծանման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, տարբեր մետաղներից պատրաստված ձասերի նմուշներ, փականագործական գործիքներ:
58.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, Գործնական աշխատանք՝ 4 ժամ
59.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մեքենաշինության մեջ կիրառվող գունավոր մետաղների և դրանց համաձուլվածքների դասակարգումը, կիրառման բնագավառները, հիմնական ֆիզիկամեխանիկական հատկությունները, մակնշավորումը
60.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ ալյումինի և պղնձի համաձուլվածքները,

		2) ճիշտ է ներկայացնում այլումինի և պղնձի համաձուլվածքների դասակարգումը, դրանց մակնշավորումը, կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում այլումինի և պղնձի համաձուլվածքների ֆիզկամեխանիկական և էլեկտրական հատկությունները, կիրառումը:
61.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է շարադրել տրակտորների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող գունավոր մետաղների՝ այլումինի և պղնձի համաձուլվածքները, դասկարգել դրանք, մակնշել, ներկայացնել դրանց ֆիզկամեխանիկական հատկությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի առնվազն 75% հարցերին:
62.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, այլումինի և պղնձի համաձուլվածքների տարբեր նմուշներ, փականագործական գործիքներ:
63.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ Գործնական աշխատանք՝ 4 ժամ
64.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մեքենաշինության մեջ կիրառվող պոլիմերային և կերամիկական նյութերի դասակարգումը, կիրառման բնագավառը և մակնշավորումը
65.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող պոլիմերային նյութերի դասակարգումը, մակնշավորումը, կիրառումը, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների արտադրության և նորոգման ժամանակ օգտագործվող կերամիկական նյութերի դասակարգումը, մակնշավորումը, կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում պոլիմերային նյութերի ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկությունները, մակնշավորումը, կիրառումը, 4) ճիշտ է ներկայացնում կերամիկական նյութերի ֆիզիկա-քիմիական և մեխանիկական հատկությունները, մակնշավորումը, կիրառումը:
66.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է շարադրել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող պոլիմերային և կերամիկական նյութերը, դասկարգել դրանք, մակնշել,

		ներկայացնել դրանց ֆիզկամեխանիկական հատկությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանել թեսթային հարցաշարի առնվազն 75% հարցերին:
67.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, պոլիմերային և կերամիկական տարբեր նյութերից պատրաստված մեքենամասերի տարբեր նմուշներ, փականագործական գործիքներ:
68.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ , Գործնական աշխատանք՝ 2 ժամ
69.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները և կարողանա օգտվել պրոֆիլների ստանդարտներից
70.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում մեքենաշինության մեջ կիրառվող պրոֆիլների տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում պրոֆիլների հիմնական երկրաչափական բնութագրերը, 3) ճիշտ է օգտվում համապատասխան ստանդարտներից, պրոֆիլների տեսականին որոշելու համար:
71.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեսթերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է շարադրել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների արտադրության և նորոգման ժամանակ առավել հաճախ կիրառվող պրոֆիլները, դասկարգել դրանք, մակնշել, ներկայացնել դրանց ֆիզկամեխանիկական հատկությունները: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը օգտվելով համապատասխան ստանդարտից ճիշտ է որոշել պրոֆիլի տեսակը և երկրաչափական պարամետրերը:
72.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, տարբեր նյութերից պատրաստված պրոֆիլների տարբեր նմուշներ, ստանդարտներ, փականագործական և չափիչ գործիքներ:
73.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, Գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԱՌԵԼԻՔԱՔՍԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ»		
68.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-004
69.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործման ու տեխնիկական սպասարկման ընթացքում կիրառվող վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների ընտրության և կիրառման կարողություններ:
70.	Մոդուլի տևողությունը	36 ժամ

71.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝ 1) ներկայացնի վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը, 2) դասակարգի շարժիչներում օգտագործվող վառելանյութերը, մակնշի, ներկայացնի կիրառման ոլորտները. 3) դասակարգի քսանյութերը,մակնշի, ներկայացնի դրանց կիրառումը, 4) ներկայացիլ տեխնիկական հեղուկների նշանակությունը, տեսակները, կիրառման բնագավառները . 5) ներկայացնի վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանումը և լիցքավորումը:
72.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
73.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը
74.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում վառելիքաքսանյութերի նշանակությունը գյուղատնտեսական մեքենաների շահագործման արդյունավետության բարձրացման գործընթացում, 2) ճիշտ է բացատրում տեխնիկական հեղուկների նշանակությունը տրակտորների հուսալիության և երկարակեցության ապահովման համար, 3) ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի նշանակությունը՝ տրակտորների հուսալի աշխատանքը և երկարակեցությունը ապահովման համար, 4) ճիշտ է ներկայացնում վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակությունը՝ գյուղատնտեսական մեքենաների անվտանգ շահագործումը ապահովելիս:
75.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների արդյունքով: Յուրաքանչյուր թեստում կառաջադրվեն 8 հարցեր, վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների նշանակության,գյուղատնտեսական մեքենաների հուսալիության և երկարակեցության ապահովման, ինչպես նաև անվտանգ շահագործման վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի առնվազն 80%-ին տրվել են դրական պատասխաններ: Թեստերի յուրաքանչյուր հարցին կառաջադրվեն երեք պատասխան, որոնցից մեկը՝ ճիշտ:
76.	Մեթոդաբանությունը և	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, վառելիքաքսանյութերի տարբեր

	ռեսուրսները	տեսակների նմուշներ, տեղեկատվություն:
77.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ , Գործնական աշխատանք՝ 2 ժամ
78.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շարժիչներում օգտագործվող վառելանյութերի դասակարգումը, մակնշումը, կիրառումը
79.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների վառելանյութերին ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, 2) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների վառելանյութերի որակի նորմավորված ցուցանիշները, 3) ճիշտ է ներկայացնում բենզինների դասակարգումը, մակնշումը և կիրառումը, 4) ճիշտ է ներկայացնում դիզելային վառելանյութերի դասակարգումը, մակնշումը և կիրառումը, 5) ճիշտ է ներկայացնում գազային վառելանյութերի տեսակները, մակնշումը և կիրառման բնագավառները:
80.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների և գործնական կատարման կատարման արդյունքով: Կառաջարկվեն տարբեր մակնիշի վառելանյութերի նմուշներ, սովորողը պետք է ճիշտ էնտրություն կատարի առաջադրված մակնիշի շարժիչի համար: Յուրաքանչյուր թեստում կառաջադրվեն 8 հարցեր, վառելիքաքսանյութերի դասակարգման, մակնշման, ներկայացվող տեխնիկաշահագործական հատկանիշների վերաբերյալ, մասնավորապես՝ -վառելանյութերին ներկայացվող պահանջները; -վառելանյութերի որակի բնութագրերը; -վառելանյութերի որակի ցուցանիշները; -բենզինների դասակարգումը, մակնշումը; -դիզելային վառելանյութերի դասակարգումը, մակնշումը; -գազային վառելանյութերի դասակարգումը, մակնշումը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի առնվազն 80%-ին տրվել են դրական պատասխաններ: Թեստերի յուրաքանչյուր հարցին կառաջադրվեն երեք պատասխան, որոնցից մեկը՝ ճիշտ: Հակահիդեհային անվտանգության կանոնների պատահյալում պարտադիր պահանջ է:
81.	Մեթոդաբանությունը և	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, վառելիքաքսանյութերի

	ռեսուրսները	տարբեր տեսակների նմուշներ, տեղեկատուներ, հակահրդեհային անվտանգության հրահանգներ և տեխնիկական միջոցներ:
82.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ , Գործնական աշխատանք՝ 4 ժամ
83.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել քսանյութերի դասակարգումը, մակնշումը և կիրառումը
84.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում շարժիչային քսանյութերի դասակարգումը, մակնշումը և կիրառման բնագավառները, 2) ճիշտ է ներկայացնում շարժահաղորդականներում կիրառվող քսանյութերի տեսակները, մակնշումը և կիրառման բնագավառները, 3) ճիշտ է ներկայացնում քսուքների տեսակները, մակնշումը և կիրառման բնագավառները:
85.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների և գործնական կատարման կատարման արդյունքով: Կառաջադրվեն տարբեր մակնիշի քսանյութերի և քսուկների նմուշներ, սովորողը պետք է ճիշտ ընտրություն կատարի առաջադրված մակնիշի շարժիչի և շարժահաղորդակի համար: Յուրաքանչյուր թեստում կառաջադրվեն 8 հարցեր, շարժիչներում և շարժահաղորդականներում կիրառվող քսանյութերի և քսուկների դասակարգման,մակնշման,կիրառման վերաբերյալ, մասնավորապես՝ -կարբյուրատորային շարժիչների քսանյութերը; -դիզելային շարժիչների քսանյութերը; -մեխանիկական շարժահաղորդականներում կիրառվող քսանյութերը և քսուքները; -հիդրավլիկական շարժահաղորդականներում կիրառվող աշխատանքային հեղուկները; - հիդրոտրանսֆորմատորներում կիրառվող աշխատանքայինհեղուկներ; -հիպոիդային քսանյութեր; -քսուքներ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի առնվազն 80%-ին տրվել են դրական պատասխաններ: Թեստերի յուրաքանչյուր հարցին կառաջադրվեն երեք պատասխան, որոնցից մեկը՝ ճիշտ: Հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր պահանջ է:
86.	Մեթոդաբանությունը և	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, քսանյութերի քսուքների

	ռեսուրսները	տարբեր տեսակների նմուշներ, տեղեկատուներ, հակահրդեհային անվտանգության հրահանգներ և և տեխնիկական միջոցներ:
87.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, Գործնական աշխատանք՝ 4 ժամ
88.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել տեխնիկական հեղուկների նշանակությունը, տեսակները, կիրառման բնագավառները
89.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենաների շարժիչներում օգտագործվող հովացնող հեղուկների նշանակությունը, դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում կցորդիչի հաղորդակում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնշումը, 3) ճիշտ է ներկայացնում արգելակային և ղեկային վարման հաղորդակներում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնշումը, 4) ճիշտ է ներկայացնում թափքի բեռնաթափման հաղորդակում կիրառվող տեխնիկական հեղուկների նշանակությունը, դասակարգումը, մակնշումը:
90.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների և գործնական կատարման կատարման արդյունքով: Կառաջադրվեն տարբեր մակնիշի տեխնիկական հեղուկների նմուշներ, սովորողը պետք է ճիշտ ընտրություն կատարի առաջադրված մակնիշի շարժիչի հովացման համակարգի, կցորդիչի հաղորդակի, ղեկային և արգելակային համակա հաղորդակների համար: Յուրաքանչյուր թեստում կառաջադրվեն 8 հարցեր, տեխնիկական հեղուկների նշանակության, դասակարգման, մակնշման վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի առնվազն 80%-ին տրվել են դրական պատասխաններ: Թեստերի յուրաքանչյուր հարցին կառաջադրվեն երեք պատասխան, որոնցից մեկը՝ ճիշտ: Հակահրդեհային անվտանգության կանոնների պաահպանումը պարտադիր պահանջ է:
91.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, տեխնիկական հեղուկների տարբեր տեսակների նմուշներ, տեղեկատուներ, հակահրդեհային անվտանգության հրահանգներ և տեխնիկական միջոցներ:

92.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, Գործնական աշխատանք՝ 4 ժամ
93.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանումը և լիցքավորումը
94.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում բենզինների պահպանումը և լիցքավորումը, 2) ճիշտ է ներկայացնում դիզելային վառելիքի պահպանումը և լիցքավորումը, 3) ճիշտ է ներկայացնում հեղուկ գազերի պահպանումը և լիցքավորումը, 4) ճիշտ է ներկայացնում սեղմված գազերի պահպանումը և լիցքավորումը, 5) ճիշտ է ներկայացնում քսանյութերի պահպանումը և լիցքավորումը, 6) ճիշտ է ներկայացնում տեխնիկական հեղուկների պահպանումը և լիցքավորումը:
95.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր թեստերի պատասխանների արդյունքով: Յուրաքանչյուր թեստում կառաջադրվեն 8 հարցեր, վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման և լիցքավորման վերաբերյալ, մասնավորապես՝ -բենզինների պահպանումը և լիցքավորումը; -դիզելային վառելանյութերի պահպանումը և լիցքավորումը; -հեղուկ գազերի պահպանումը և լիցքավորումը; -բնական գազերի պահպանումը և լիցքավորումը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե թեստերի առնվազն 80%-ին տրվել են դրական պատասխաններ: Թեստերի յուրաքանչյուր հարցին կառաջադրվեն երեք պատասխան, որոնցից մեկը՝ ճիշտ: Հակահրդեհային անվտանգության կանոնների պատահականումը պարտադիր պահանջ է:
96.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, ուսումնական գրականություն, վառելիքաքսանյութերի և տեխնիկական հեղուկների պահպանման և լիցքավորման համար օգտագործվող սարքավորումների և հարմարանքների մանրակերտեր, տարբեր սարքավորումների և հարմարանքների նմուշներ,պլակատներ, ուսումնական գրականություն, տեսֆիլմեր, տեղեկատուներ, հակահրդեհային անվտանգության հրահանգներ և տեխնիկական միջոցներ:
97.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ»

98.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-005
99.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ և գործնական կարողություններ գյուղատնտեսական մեքենաների էլեկտրական սարքավորումների կառուցվածքի, աշխատանքի առանձնահատկությունների, կարգավորման և պարզ անսարքությունների վերացման վերաբերյալ:
100.	Մոդուլի տևողությունը	42 ժամ
101.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԳՄՍՓ-3-13-003 «Նյութագիտության հիմունքներ» մոդուլը:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1. ներկայացնի գյուղատնտեսական մեքենաների էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, կատարի հիմնական կարգավորումները. 2. հանի և տեղադրի գեներատորը, կարգավորի շարժափոկի ձգվածությունը. 3. ստուգի և սպասարկի մարտկոցային կուտակիչները, կարգավորի վառոցքի մոմենտը, լուսավորման և լուսազդանշանային համակարգը. 4. հայտնաբերի և պարզ եղանակներով վերացնի էլեկտրասարքավորումների հիմնական անսարքությունները:
102.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
103.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել գյուղատնտեսական մեքենայի էլեկտրական սարքավորումների նշանակությունը, աշխատանքը, հիմնական կարգավորումները
104.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական խմբերը՝ հոսանքի աղբյուրներ, վառոցքի համակարգ, լուսավորման և լուսազդանշանային համակարգ, ներկայացնելով դրանց նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների աշխատանքի սկզբունքները, 3) ճիշտ է ներկայացնում գործարկիչի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 4) ճիշտ է ներկայացնում էլեկտրական սարքավորումների հիմնական կարգավորման աշխատանքները:

105.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: սովորողին կտրվեն առնվազն 5 հարց՝ գյուղատնտեսական մեքենաների էլեկտրական սարքավորումների նշանակության, հիմնական խմբերի, դրանց ընդհանուր կառուցվածքի, աշխատանքի սկզբունքների և հիմնական կարգավորման սկզբունքների վերաբերյալ: Արդյունքի յուրացումը կհամարվի դրական, եթե հարցերի առնվազն 80 %-ին տրվի ճիշտ պատասխան, իսկ մնացած հարցերի պատասխաններում կարող են թույլ տրվել որոշ ոչ էական սխալներ:
106.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են էլեկտրական համակարգերի և սարքավորումների ստենդներ, պլակատներ, մասնագիտական գրականություն:
107.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
108.	Ուսումնառության արդյունք 2	Հանել և տեղադրել գյուղատնտեսական մեքենայի գեներատորը, կարգավորել շարժափոկի ձգվածությունը
109.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գեներատորի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքը, 2) ճիշտ է հանում, ստուգում և տեղադրում գեներատորը, 3) ճիշտ է կարգավորում շարժափոկի ձգվածությունը:
	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ է հանում և տեղադրում գեներատորը, կարգավորումը շարժափոկի ձգվածությունը, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պայման է: Հարցերին բանավոր պատասխանելիս թույլ են տրվում որոշ ոչ էական սխալներ:
	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, կարգավորման և էլեկտրաչափիչ գործիքներ, տրակտորի էլեկտրական համակարգի ստենդներ, գեներատորի ստենդ , առանձին հանգույցներ, սարքեր, մոդելներ:
	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
110.	Ուսումնառության արդյունք 3	Ստուգել և սպասարկել մարտկոցային կուտակիչները, կարգավորել վառոցքի մոմենտը լուսավորման և լուսազդանշանային համակարգը

114.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում մարտկոցային կուտակիչների սպասարկումը, 2) ճիշտ է ստուգում մարտկոցային կուտակիչների տեխնիկական վիճակը հատուկ գործիքների օգնությամբ, 3) ճիշտ է ներկայացնում վառոցքի մոմենտի ազդեցությունը շարժիչի աշխատանքի վրա, 4) ճիշտ է հանում, ստուգում և տեղադրում վառոցքի մոմերն ու կարգավորում վառոցքի մոմենտը, 5) ճիշտ է հանում, ստուգում և տեղադրում բաշխիչ-ընդհատիչը, կոնդեսատորը և կոճը, 6) ճիշտ է ներկայացնում գյուղատնտեսական մեքենայի լուսավորման և լուսազդանշանային համակարգի կառուցվածքը, 7) ճիշտ է կարգավորում գյուղատնտեսական մեքենայի լապտերի լույսը:
115.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը ճիշտ կատարի մարտկոցային կուտակիչի տեխնիկական վիճակի ստուգումը, վառոցքի մոմենտի և լապտերի լույսի կարգավորումը և սպասարկումը: Բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության տեխնիկայի կանոնների խիստ պահպանումով: Բանավոր պատասխաններում թույլատրվում են որոշ ոչ էական սխալներ:
116	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գյուղատնտեսական տարբեր մեքենաների շարժիչի, վառոցքի համակարգի, լուսային և լուսաազդանշանային գործող ստենդներ, չափիչ գործիքներ, հարմարանքներ և սարքավորումներ, ուսումնական գրականություն, տեղեկատու նյութեր, պլակատներ:
117.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
118.	Ուսումնառության արդյունք 4	Հայտնաբերել և պարզ եղանակներով վերացնել գյուղատնտեսական մեքենաների էլեկտրասարքավորումների հիմնական պարզ անսարքությունները
119.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքավորումների հիմնական անսարքությունները, 2) ճիշտ է հայտնաբերում հոսանքի աղբյուրների հիմնական պարզ անսարքությունները, 3) ճիշտ է ներկայացնում գործարկիչի հիմնական անսարքությունները, 4) ճիշտ է հայտնաբերում վառոցքի համակարգի հիմնական պարզ անսարքությունները, 5) ճիշտ է հայտնաբերում լուսավորման և լուսազդանշանային համակարգի հիմնական պարզ անսարքությունները, 6) ճիշտ է հայտնաբերում հակաառևանգման համակարգի հիմնական պարզ անսարքությունները:

120.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը կարողանա ճիշտ հայտնաբերել հոսանքի աղբյուրների, գործարկիչի, վառոցքի համակարգի, լուսավորման և լուսազդանշանային համակարգի հիմնական պարզ անսարքությունները, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումով: Բանավոր պատասխաններում թույլատրվում են որոշ ոչ էական սխալներ:
121.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գյուղատնտեսական տարբեր մեքենաների էլեկտրական համակարգերի և վառոցքի համակարգի գործող ստենդներ, առանձին հանգույցներ և մեքենամասեր, չափիչ գործիքներ, հարմարանքներ և սարքավորումներ, ուսումնական գրականություն, տեղեկատու նյութեր, պլակատներ:
122.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ»		
123.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-006
124.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել ներքին այրման շարժիչների հիմնական մեխանիզմների և համակարգերի կառուցվածքի, դրանց աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ անհրաժեշտ կիրառական գիտելիքներ և հմտություններ:
125.	Մոդուլի տևողությունը	52 ժամ
126.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՄՍՓ-3-13-005 «Գյուղատնտեսական մեքենաների էլեկտրական սարքավորումներ» մոդուլը:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1. ներկայացնի ներքին այրման շարժիչների $\dot{V}_B^3 \dot{V}^3 \dot{I} \dot{a} \dot{\delta} \dot{A} \dot{U} \dot{a} \dot{\delta} \dot{Y} \dot{A}$, տեսակները և հիմնական մասերը. 2. ներկայացնի ներքին այրման շարժիչի հիմնական մեխանիզմների կառուցվածքը և աշխատանքը. 3. ներկայացնի ներքին այրման շարժիչի հիմնական համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները և աշխատանքը:
127.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

128.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել ներքին այրման շարժիչների դերը, տեսակները և նրա հիմնական մասերը:
129.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ներքին այրման շարժիչի դերը, դասակարգումը, 2) ճիշտ է բացատրում ներքին այրման շարժիչներին ներկայացվող պահանջները և տեխնիկական բնութագրերը, 3) ճիշտ է բացատրում ներքին այրման շարժիչի հիմնական մասերի նշանակությունը:
130.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Սովորողին կառաջադրվեն առնվազն 5 հարց ներքին այրման շարժիչի նշանակության,դասակարգման, ներկայացվող հիմնական պահանջների և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:Ստորև ներկայացվում են մանրամասները. - ներքին այրման շարժիչների դասակարգման սկզբունքները; -շարժիչի հիմնական պարամետրերը և բնութագրերը; -ներքին այրման շարժիչի հիմնական մասերը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը կարողանա ճիշտ ներկայացնել ներքին այրման շարժիչի նշանակությունը,դասակարգումը, ներկայացվող հիմնական պահանջները և աշխատանքային կարգը:
131.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ներքին այրման շարժիչների տարբեր տեսակների ստենդներ,առանձին հանգույցներ և մեքենամասեր, ուսումնական գրականություն,տեղեկատու նյութեր, պլակատներ, տեսաֆիլմեր:
132.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
133.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ներքին այրման շարժիչների հիմնական մեխանիզմների կառուցվածքային առանձնահատկությունները
134.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում կարբյուրատորային, դիզելային և վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները, 2) ճիշտ է բացատրում ներքին այրման շարժիչների ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում շուտովիկ շարժաթևային մեխանիզմի շարժական և անշարժ մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում գազաբաշխիչ մեխանիզմի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը, 5) ճիշտ է ներկայացնում փականային գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերից յուրաքանչյուրի նշանակությունը և ընդհանուր կառուցվածքը:

135.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Սովորողին կառաջադրվեն առնվազն 8 հարց ներքին այրման տարբեր տեսակների շարժիչների աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ, շուտովիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների նշանակության, դասակարգման, ներկայացվող հիմնական պահանջների և ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: Ստորև ներկայացվում են մանրամասները. - ներքին այրման շարժիչների դասակարգման սկզբունքները; - շարժիչի հիմնական պարամետրերը և բնութագրերը; - քառատակտ բենզինային շարժիչի աշխատանքային կարգը և տակտերի գործընթացները; - երկտակտ բենզինային շարժիչի աշխատանքային կարգը և տակտերի գործընթացները; - քառատակտ դիզելային շարժիչի աշխատանքային կարգը և տակտերի գործընթացները; - երկտակտ շարժիչի աշխատանքային կարգը և տակտերի գործընթացները; - բազմագլան շարժիչների աշխատանքային կարգը; - վառելանյութի ներարկումով շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները; - շուտովիկ-շարժաթևային մեխանիզմի նշանակությունը; - շուտովիկ-շարժաթևային մեխանիզմի անշարժ մեքենամասերը; - շուտովիկ-շարժաթևային մեխանիզմի շարժական մեքենամասերը; - գազաբաշխիչ մեխանիզմի նշանակությունը; - փականային տիպի գազաբաշխիչ մեխանիզմի մեքենամասերը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը կարողանա ճիշտ ներկայացնել առաջադրված ներքին այրման տարբեր տիպի շարժիչների աշխատանքի առանձնահատկությունները, շուտովիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների կառուցվածքը, աշխատանքը:
136.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ներքին այրման շարժիչների տարբեր տեսակների աշխատանքի առանձնահատկությունները ներկայացնող ստենդներ, շուտովիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների ստենդներ, առանձին հանգույցներ և մեքենամասեր, ուսումնական գրականություն, տեղեկատու նյութեր, պլակատներ, տեսաֆիլմեր:
137.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ

138.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ներքին այրման շարժիչների հիմնական համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները
139.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հեղուկային և օդային հովացման համակարգերից յուրաքանչյուրի նշանակությունը և կառուցվածքային առանձնահատկությունները և աշխատանքը, 2) ճիշտ է ներկայացնում մեքենամասերի յուղման առանձնահատկությունները, յուղման համակարգի նշանակությունը ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 3) ճիշտ է ներկայացնում կարբյուրատորային, դիզելային և վառելիքի ներարկումով սնման համակարգների կառուցվածքային առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում սնման յուրաքանչյուր համակարգի հիմնական մասերի նշանակությունը և դրանց ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 5) ճիշտ է ներկայացնում գազախառնուրդներով սնման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները հիմնական մասերի նշանակությունը, դրանց ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 6) ճիշտ է ներկայացնում վառոցքի համակարգի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 7) ճիշտ է ներկայացնում գործարկման համակարգի նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը:
140.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Սովորողին կառաջադրվեն առնվազն 10 հարց ներքին այրման տարբեր տեսակների շարժիչների հովացման, յուղման, սնման համակարգերի նշանակության, դասակարգման, ներկայացվող հիմնական պահանջների, կառուցվածքային առանձնահատկությունների և աշխատանքի վերաբերյալ: Ստորև ներկայացվում են մանրամասները. - ներքին այրման շարժիչների հովացման համակարգի նշանակությունը, դասակարգումը; - ներքին այրման շարժիչների հեղուկային հովացման համակարգի ընդհանուր կառուցվածքը; - հեղուկային հովացման համակարգում օգտագործվող հեղուկների դասակարգումը, մակնշումը, ներկայացվող պահանջները; - հեղուկային հովացման համակարգի աշխատանքի առանձնահատկություններ; - օդային հովացման համակարգի ընդհանուր կառուցվածքը; - օդային հովացման համակարգի աշխատանքի առանձնահատկություններ; - շարժիչի յուղման համակարգի նշանակությունը, շարժիչի մեքենամասերի յուղման հիմնական տեսակները;

		-շարժիչային յուղերի դասակարգումը, բնութագրերը, ներկայացվող պահանջները; - շարժիչի յուղման համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; - շարժիչի սնման համակարգի նշանակությունը, դասակարգումը; -բենզինային շարժիչի վառելանյութերի տեսակները, բնութագրերը և ներկայացվող պահանջները; - կարբյուրատորային շարժիչի սնման համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; -դիզելային շարժիչի վառելանյութերի տեսակները, բնութագրերը և ներկայացվող պահանջները; - դիզելային շարժիչի սնման համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; -վառելանյութի ներարկումով շարժիչի սնման համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; - շարժիչի վառոցքի համակարգի նշանակությունը, դասակարգումը, ներկայացվող պահանջները; - շարժիչի վառոցքի համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; - շարժիչի գործարկման համակարգի նշանակությունը, դասակարգումը, ներկայացվող պահանջները; - շարժիչի գործարկման համակարգի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները; Արդյունքի ձեռքբերումը կհամարվի դրական, եթե սովորողը կարողանա ճիշտ ներկայացնել առաջադրված ներքին այրման տարբեր տեսակի շարժիչների համակարգերի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները:
141.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ներքին այրման շարժիչների տարբեր տեսակների հովացման, յուղման, սնման համակարգերի կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները ներկայացնող ստենդներ, տարբեր համակարգերի առանձին մեխանիզմների և հանգույցների ստենդներ, տարբեր մեքենամասեր, ուսումնական գրականություն,տեղեկատու նյութեր, պլակատներ, տեսաֆիլմեր:
142.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 8 ժամ, գործնական աշխատանք՝ 16 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»		
143.	Մոդուլի դասիչը	ԱՄՆՓ–3–13-007
144.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ և դրանց կիրառման

		հմտություններ՝երթեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքի և ՀՀ-ում գործող ճանապարհային երթեկության կանոնների վերաբերյալ:
145.	Մոդուլի տևողությունը	18 ժամ
146.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1.բացատրի Ճանապարհային երթեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, 2. բացատրի Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթեկության կանոնները, 3.բացատրի ճանապարհային նշանները, 4. բացատրի ճանապարհային գծանշանները, 5. բացատրի տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները, 6. բացատրի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները:
147.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
148.	Ուսումնառության արդյունք 1	Բացատրել «Ճանապարհային երթեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները
149.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընկալում և բացատրում գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում ճանապարհային երթեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, 3) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները՝ համաձայն գործող իրավական ակտերի, 4) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցների դասակարգման և դրանց վարման թույլտվության իրավունքները՝ համաձայն գործող իրավական ակտերի:
150.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել գործող օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները,

		ճանապարհային երթևեկության մասնակիցների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ, վարորդի, հետիոտների և ուղևորների հիմնական պարտականություններն ու իրավունքները, տարբեր տրանսպորտային միջոցների դասակարգումը և դրանք վարելու իրավունքը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողն անսղալ պատասխանում է բոլոր հարցերին: Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործվեն համապատասխան ստուգման թերթիկ:
151.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, օրենսդրական փաստաթղթեր, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ:
152.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 1 ժամ
153.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները
154.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները, 2) ճիշտ է ներկայացնում ՀՀ ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված լուսացույցի և կարգավորողի ազդանշանները, 3) ճիշտ է կիրառում վթարային ազդանշանը, 4) ճիշտ է ներկայացնում հատուկ ազդանշանի կիրառումը, 5) ճիշտ է ներկայացնում երթևեկությունը ավտոմայրուղիներում և բնակելի գոտիներում, 6) ճիշտ է ներկայացնում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկության առավելությունը, արտաքին լուսային սարքերի և ծայնային ազդանշանների կիրառումը, մեխանիկական տրանսպորտային միջոցների քարշակումը, մարդկանց և բեռների փոխադրումները:
155.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել և կիրառել՝ ա. ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնների ընդհանուր դրույթները,

		բ. լուսացույցի և կարգավորողի ազդանշանները, գ. վթարային ազդանշանի և «Վթարային կանգառ»> ճանաչման նշանի կիրառումը, դ. հատուկ ազդանշանների կիրառումը, ե. երթևեկության սկիզբը և մանևրումը, զ. տրանսպորտային միջոցների դասավորումը երթևեկելի մասում, է. վազանցը և երթևեկության արագությունը, ը. կանգառը և կայանումը, թ. հետիոտնային անցումների հատումը, ժ. երթևեկությունը երկաթուղային գծանցներով, ի. երթևեկությունը ավտոմայրուղիներով, լ. երթևեկությունը բնակելի գոտիներում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման: Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
156.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, յուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների յուսանկարներ:
157.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 1 ժամ
158.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ճանապարհային նշանները
159.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ճանապարհային նախազգուշացնող նշանները, 2) ճիշտ է ներկայացնում առավելության նշանները, 3) ճիշտ է ներկայացնում արգելող նշանները, 4) ճիշտ է ներկայացնում թելադրող և հատուկ թելադրանքի նշանները, 5) ճիշտ է ներկայացնում տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակների) նշանները:

160.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել և օգտվել՝ ա. ճանապարհային նախազգուշացնող նշաններից, բ. առավելության նշաններից, գ. արգելող նշաններից, դ. թելադրող և հատուկ թելադրանքի նշաններից, ե. տեղեկատվության սպասարկման և լրացուցիչ տեղեկատվության (ցուցանակներ) նշաններից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ կիրառել երթևեկության կազմակերպման անհրաժեշտ սխեման: Աշխատանքի կատարումը ստուգելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
161.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ ճանապարհային նշանների վերաբերյալ և կարողություններ օգտվելու այդ նշաններից: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների լուսանկարներ, տեղեկատու նյութեր:
162.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
163.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ճանապարհային գծանշանները և տրանսպորտային միջոցի ճանաչման նշանները
164.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ճանապարհային հորիզոնական գծանշումները և դրանց կիրառումը, 2) ճիշտ է ներկայացնում ճանապարհային ուղղաձիգ գծանշումները և դրանց կիրառումը, 3) ճիշտ է ներկայացնում «Ավտոգնացք», «Երկարաչափ տրանսպորտային միջոց» ճանաչման նշանները և նրանց ներկայացվող պահանջները, 4) ճիշտ է ներկայացնում «Արագության սահմանափակում», «Դանդաղընթաց տրանսպորտային միջոց», «Մեծ եզրաչափերով բեռ», «Վտանգավոր բեռ» նշանները և դրանց ներկայացվող պահանջները, 5) ճիշտ է ներկայացնում «Երեխաների փոխադրում», «Խուլ վարորդ», «Ուսումնական տրանսպորտային միջոց», «Վթարային Կանգառ», «Բժիշկ», «Հաշմանդամ» նշանները և դրանց ներկայացվող պահանջները:

165.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի օգնությամբ: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից պահանջվում է ներկայացնել ա. Ավտոգնացք, բ. Երկարաչափ Տրանսպորտային միջոց, գ. Արագության սահմանափակում, դ. Դանդաղընթաց տրանսպորտային միջոց, ե. Մեծ եզրաչափերով բեռ, զ. Վտանգավոր բեռ, է. Երեխաների փոխադրում, ը. Խուլ վարորդ, թ. Ուսումնական տրանսպորտային միջոց, ժ. Բժիշկ, ի. Հաշմանդամ նշանները և դրանց ներկայացվող պահանջները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է համարվում, եթե սովորողը կարողանում է ճանապարհափողոցային ցանցի տվյալ տեղամասում ճիշտ օգտվել տրանսպորտային միջոցի ճանաչման նշաններից:
166.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տրանսպորտային միջոցի ճանաչման նշանների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական գրականություն, ճանապարհային նշանների լուսանկարներ, տեղեկատու նյութեր, ֆիլմեր :
167.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
168..	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներից բխող վարչական իրավախախտումները և նրանց համապատասխան սանկցիաները
169.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում գործող ճանապարհային երթևեկության կանոնների իրավախախտումների հոդվածի

		դիսպոզիցիան, 2) ճիշտ է ներկայացնում ՎԻՎՕ հոդվածը, մասը և համաձայն վարչական իրավախաղտումների տուգանքաչափերը:
170.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեսթերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է հստակ ներկայացնել իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածները և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերը:
171.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմնական հոդվածների և օրենսգրքով սահմանված վարչական տուգանքաչափերի մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվում է ուսումնական մասնագիտական գրականություն, տեղեկատու նյութեր:
172.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԻՊԱՅԻՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
173.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-008
174.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների տիպային միացությունների (պարուրակային, երիթային և բազմաերիթային միացություններ), ինչպես նաև տիպային մեքենամասերի (ատամնանիվներ, փոկանիվներ, աստղանիվներ, լիսեռներ և այլն) նորոգման և վերականգնման հմտություններ:
175.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
176.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՄՍՓ-3-13-002 «Թույլտվածքներ և նստեցվածքներ, չափիչ գործիքներ և չափումների տեխնիկան», ԳՄՍՓ-3-13-003 «Նյութագիտության հիմունքներ», ԱՀ-ԱԱՕ-3-13-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլները:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) կատարի մետաղական մեքենամասերի մեխանիկական մշակման տարբեր աշխատանքներ.ը, 2) կատարի գայլիկոնման, եզրալայնման և անցաքակոկման աշխատանքներ, 3) կատարի պարուրակման, գամման, զոդման աշխատանքներ.

		4) կատարի ներխարտոցում և հարմարակցում, քերանում, կիպահղկում. 5) կատարի երիթային և բազմաերիթային միացությունների նորոգում:
177.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
178.	Ուսումնառության արդյունք 1	Կատարել մետաղի հատումը, հարթումը և ծռումը, կտրումը, խարտոցումը
179.	Կատարման չափանիշներ	1) կատարի մետաղի հատում մամլակի մեջ, սալի և զնդանի վրա, մեքենայացված հատում, 2) կատարի մետաղի հարթում, 3) կատարի մետաղի ծռում, 4) կատարի մետաղի կտրում, 5) կատարի մետաղի խարտոցում:
180.	Գնահատման միջոցը	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ և պահանջվում է կատարել մետաղի հարթում, ծռում, կտրում, խարտոցում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
181.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական գործիքներ:
182.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
183.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել գայլիկոնում, եզրալայնում և անցքակոկում
184.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում գայլիկոնների սրում և ենթասրում, 2) ճիշտ է կատարում գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, 3) ճիշտ է կատարում ձեռքով գայլիկոնում, 4) ճիշտ է կատարում եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում:
185.	Գնահատման միջոցը	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, ձեռքով

		գայլիկոնում, եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
186.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
187.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
188.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել պարուրակում, գամում, զոդում
189.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում թուջե և պողպատե մեքենամասերի մաշված պարուրակների վերականգնման աշխատանքների հաջորդականությունը, 2) ճիշտ է կատարում լիսեռների և առանցքների արտաքին պարուրակի վերականգնումը, 3) ճիշտ է կատարում անցքերի ներքին պարուրակի վերականգնումը, 4) ճիշտ է օգտվում պարուրակների մշակման ժամանակ օգտագործվող գործիքներից, հարմարանքներից և սարքավորումներից: 5) ճիշտ է կատարում տարբեր մեքենամասերի գամումը, 6) ճիշտ է կատարում տարբեր մեքենամասերի զոդումը:
190.	Գնահատման միջոցը	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել գայլիկոնում ըստ գծանշման, կոնդուկտորի և հենակի, ձեռքով գայլիկոնում, եզրալայնում, անցքալայնում և անցքակոկում, զոդում: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
191.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ, զոդման սարքավորումներ:

192.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 12 ժամ
193.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել ներխարտոցում և հարմարակցում, քերանում, կիպահղկում
194.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում անցքերի ներխարտոցում, 2) ճիշտ է կատարում մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում, 3) ճիշտ է կատարում շինվածքի մակերևույթների քերանում, 4) ճիշտ է կատարում կիպահղկման աշխատանքներ:
195.	Գնահատման միջոցը	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել անցքերի ներխարտոցում, մեքենամասերի հարմարադրում և հարմարակցում, շինվածքի մակերևույթների քերանում, կիպահղկման աշխատանքներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
196.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիվ նյութեր, տարբեր տեսակի մետաղի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
197.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
198.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել երիթային և բազմաերիթային միացությունների նորոգում
199.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում բազմաերիթային և երիթային միացությունների վերականգնման եղանակներն ու աշխատանքների հաջորդականությունը, 2) ճիշտ է կատարում մաշված բազմաերիթային միացության նորոգման և վերականգնման գործընթացները, 3) ճիշտ է իրականացնում մաշված երիթային միացության նորոգման և վերականգնման գործընթացները:
200.	Գնահատման միջոցը	Սովորողի կարողությունները ստուգելու նպատակով տրվում են տարբեր տեսակի մետաղական մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և պահանջվում է կատարել նորոգման ենթակա երիթային և բազմաերիթային

		միացության նորոգման աշխատանքներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ապահովել նշված աշխատանքների կատարման բավարար որակ:
201.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տարբեր տեսակի մետաղներից պատրաստված մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ:
202.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆԵՐՔԻՆ ԱՅՐՄԱՆ ՇԱՐԺԻՉԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՆՈՐՈԳՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
203.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-009
204.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գյուղատնտեսական մեքենաների ներքին այրման շարժիչների հիմնական մեխանիզմների և համակարգերի տեխնիկական սպասարկման ու նորոգման աշխատանքների կատարման կարողություններ և հմտություններ:
205.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
206.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՄՍՓ-3-13-006 «Ներքին այրման շարժիչի ընդհանուր կառուցվածք», ԳՄՍՓ-3-13-008 «Տիպային միացությունների և մեքենամասերի նորոգման ու վերականգման հմտություններ» մոդուլները:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) կատարի շարժիչի հիմնական մեխանիզմների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, 2) կատարի շարժիչի հովացման և յուղման համակարգերի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ, 3) կատարի շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ. 4) կատարի շարժիչի վառոցքի և գործարկման համակարգի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

207.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:
209.	Ուսումնառության արդյունք1	Կատարել շարժիչի հիմնական մեխանիզմների տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքները
210.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում շարժիչի արատորոշումը, 2) ճիշտ է ներկայացնում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի հիմնական անսարքությունները, 3) ճիշտ է կատարում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 4) ճիշտ է կատարում շուռտվիկ-շարժաթևային մեխանիզմի և հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները, 5) ճիշտ է ներկայացնում գազաբաշխիչ մեխանիզմի հիմնական անսարքությունները, 6) ճիշտ է կատարում գազաբաշխիչ մեխանիզմի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 7) ճիշտ է կատարում գազաբաշխիչ մեխանիզմի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները: 8) ճիշտ է ներկայացնում շարժիչի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներին առնչվող փաստաթղթերի անհրաժեշտ ձևակերպումները և լրացումները:
211.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ կատարել առաջադրված շարժիչի շուռտվիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները, գնահատել առաջադրված շարժիչի շուռտվիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների հնարավոր անսարքությունները և ներկայացնել նորոգման տեխնոլոգիական գործընթացները; Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ճիշտ կատարել առաջադրված շար-իչի արատորոշումը, շարժիչի շուռտվիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ գնահատել հնարավոր անսարքությունները, ճիշտ ներկայացնել և հիմնավորել նորոգման տեխնոլոգիական գործընթացները: Տեխնոլոգիական հաջորդականության, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության պահանջների պահապանումը պարտադիր պահանջ է:
212.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են

		դիտակտիկ նյութեր, տարբեր շարժիչների ստենդներ, շուտովիկ-շարժաթևային և գազաբաշխիչ մեխանիզմների առանձին ստենդներ, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ, սարքավորումներ, տեսաֆիլմեր, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ:
213.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
214.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել շարժիչի հովացման և յուղման համակարգերի տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքները
215.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում շարժիչի հովացման համակարգի հիմնական անսարքությունները, 2) ճիշտ է կատարում հովացման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 3) ճիշտ է կատարում հովացման համակարգի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները, 4) ճիշտ է բացատրում շարժիչի յուղման համակարգի հիմնական անսարքությունները, 5) ճիշտ է կատարում շարժիչի յուղման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 6) ճիշտ է կատարում շարժիչի յուղման համակարգի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները:
216.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ կատարել առաջադրված շարժիչի հովացման և յուղման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները, գնահատել առաջադրված շարժիչի հովացման և յուղման համակարգերի հնարավոր անսարքությունները և ներկայացնել նորոգման տեխնոլոգիական գործընթացները; Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ճիշտ կատարել արատորոշման և տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ գնահատել հնարավոր անսարքությունները, ճիշտ ներկայացնել և հիմնավորել նորոգման տեխնոլոգիական գործընթացները: Տեխնոլոգիական հաջորդականության, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության պահանջների պահապանումը պարտադիր պահանջ է:
217.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տարբեր շարժիչների ստենդներ, հովացման և յուղման համակարգերի ստենդներ, մեխանիզմների

		ստենդներ,, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ, սարքավորումներ, տեսֆիլմեր, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ::
218.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
219.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքները
220.	Կատարման չափանիշներ	ճիշտ է բացատրում կարբյուրատորային շարժիչի սնման համակարգի հիմնական անսարքությունները և դրանց ազդեցությունը շարժիչի արդյունավետ աշխատանքների վրա, ճիշտ է կատարում կարբյուրատորային շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ է կատարում կարբյուրատորային շարժիչի սնման համակարգի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները, ճիշտ է բացատրում դիզելային շարժիչի սնման համակարգի հիմնական անսարքությունները և և դրանց ազդեցությունը շարժիչի արդյունավետ աշխատանքների վրա, ճիշտ է կատարում դիզելային շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ է կատարում դիզելային շարժիչի սնման համակարգի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները, ճիշտ է բացատրում բնական գազով և հեղուկ գազով աշխատող շարժիչների սնման համակարգերի հիմնական անսարքությունները և դրանց ազդեցությունը շարժիչի արդյունավետ աշխատանքների վրա, ճիշտ է կատարում բնական գազով և հեղուկ գազով աշխատող շարժիչների սնման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ է կատարում բնական գազով և հեղուկ գազով աշխատող շարժիչների սնման համակարգերի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման աշխատանքները,) ճիշտ է բացատրում վառելիքի ներարկումով շարժիչի սնման համակարգի հիմնական անսարքությունները,) ճիշտ է կատարում վառելիքի ներարկումով շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները,) ճիշտ է կատարում վառելիքի ներարկումով սնման համակարգի հիմնական անսարքությունների վերացման և նորոգման

		աշխատանքները:
221.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ կատարել առաջադրված շարժիչի սնման համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, գնահատել առաջադրված շարժիչի սնման համակարգի հնարավոր անսարքությունները և ներկայացնել նորոգման տեխնոլոգիական գործընթացները; Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ճիշտ կատարել տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ գնահատել հնարավոր անսարքությունները, ներկայացնել և հիմնավորել նորոգման տեխնոլոգիական գործընթացները: Տեխնոլոգիական հաջորդականության, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության պահանջների պահապանումը պարտադիր պահանջ է:
222.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տարբեր շարժիչների ստենդներ, սնման համակարգերի ստենդներ, առանձին մեխանիզմեր, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական և չափիչ գործիքներ, սարքավորումներ, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ:
223.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, գործնական աշխատանք՝ 18 ժամ
224.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել շարժիչի վառոցքի և գործարկման համակարգի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքները
225.	Կատարման չափանիշներ	ճիշտ բացատրում շարժիչի վառոցքի համակարգի հիմնական անսարքությունները, ճիշտ է բացատրում շարժիչի վառոցքի համակարգի հիմնական անսարքությունների ազդեցությունը շարժիչի արդյունավետ աշխատանքի վրա, ճիշտ է կատարում շարժիչի վառոցքի համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ է կատարում ճիշտ է կատարում շարժիչի վառոցքի համակարգի հիմնական անսարքությունների վերացման նորոգման աշխատանքները: ճիշտ է կատարում ճիշտ է կատարում շարժիչի գործարկման համակարգի հիմնական անսարքությունների վերացման

		նորոգման աշխատանքները:
226.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ կատարել առաջադրված շարժիչի վառոցքի և գործարկման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքները, գնահատել առաջադրված շարժիչի վառոցքի և գործարկման համակարգերի հնարավոր անսարքությունները և ներկայացնել նորոգման տեխնոլոգիական գործընթացները; Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը կարողանում է ճիշտ կատարել տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ գնահատել հնարավոր անսարքությունները, ներկայացնել և հիմնավորել նորոգման տեխնոլոգիաների գործընթացները: Տեխնոլոգիական հաջորդականության, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության պահանջների պահապանումը պարտադիր պահանջ է:
227.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնել անհրաժեշտ կարողություններ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տարբեր շարժիչների ստենդներ, վառոցքի և գործարկման համակարգերի ստենդներ, առանձին մեխանիզմներ, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, մեքենամասերի նախապատրաստվածքներ և գծագրեր, ուսումնական գրականություն, փականագործական էլեկտրատեխնիկական և չափիչ գործիքներ, սարքավորումներ, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ:
228.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱԿՏՈՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ»		
229.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-010
230.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ մոտ ձևավորել տրակտորների, ինքնագնած շափների , կցանքների, մեխանիզմների, համակարգերի և աշխատանքային սարքավորումների կառուցվածքը և աշխատանքը իմանալու ունակություններ, դրանց տեխնիկական սպասարկում և ընթացիկ նորոգում կատարելու, հնարավոր անսարքությունները որոշելու կարողություններ և հմտություններ:
231.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
232.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՄՍՓ-3-13-008 «Տիպային միացությունների և

		մեքենամասերի նորոգման ու վերականգման հմտություններ» մոդուլները:
	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1) դասակարգի տրակտորների և ինքագնած շասսիները, ներկայացնի ընդհանուր կառուցվածքը, 2) կատարի շարժահաղորդակի աշխատանքը, որոշի հնարավոր անսարքությունները և կատարի կարգավորման աշխատանքներ, 3) ներկայացնի անիվավոր տրակտորի ընթացքային մասի կառուցվածքը, որոշի հնարավոր անսարքությունները և կատարի կարգավորման աշխատանքներ, 4) ներկայացնի անիվավոր տրակտորի ղեկային կառավարման կառուցվածքը, որոշի հնարավոր անսարքությունները և կատարի կարգավորման աշխատանքներ, 5) ներկայացնի անիվավոր տրակտորի և կցանքի արգելակային համակարգերի կառուցվածքը, որոշի հնարավոր անսարքությունները և կատարի կարգավորման աշխատանքներ, 6) ներկայացնի անիվավոր տրակտորի աշխատանքային սարքավորումների կառուցվածքը, որոշի հնարավոր անսարքությունները և կատարի կարգավորման աշխատանքներ, 7) կատարել տրակտորի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները:
233.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
234.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տրակտորների և ինքագնաց շասսիների դասակարգումը, ընդհանուր կառուցվածքը, կառուցվածքային հիմնական մասերի նշանակությունը
235.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնաց շասսիների և կցանքների դասակարգման սկզբունքները, 2) ճիշտ է տարբերակում տարբեր մակնիշների տրակտորները, ինքնագնած շասսիները և կցանքները, 3) ճիշտ է ներկայացնում տրակտորների, ինքնագնած շասսիների և կցանքների ընդհանուր կառուցվածքը, հիմնական կառուցվածքային մասերի նշանակությունը,
236.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեսթերի օգնությամբ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե սովորողը կարողանում է հստակ ներկայացնել ինքնագնած շասսիների և կցանքների դասակարգումը,

		մակնշումը, ընդհանուր կառուցվածքը և հիմնական կառուցվածքային մասերը:
237.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ կցորդիչի, փոխանցումների և բաշխիչ տուփի, տանող կամրջակի ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի վերաբերյալ, կարողություններ արտաքին արտահայտումներով որոշելու հնարավոր անսարքությունները, և կարգավորելու դրանք: Ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսումնական գրականություն, դիտակտիկ նյութեր, ինքնագնաձ շասիների և կցանքների մոդելներ և իրական նմուշներ, տարբեր մեքենամասեր և հանգույցներ,պլակատներ, տեսաֆիլմեր:
238.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
239.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շարժահաղորդակի աշխատանքը
240.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կցորդիչի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 2) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով հնարավոր անսարքությունները, 3) ճիշտ է կարգավորում կցորդիչը, 4) ճիշտ է ներկայացնում փոխանցումների տուփի նշանակությունը , ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 5) ճիշտ է ներկայացնում բաշխիչ-բաժանիչ տուփի նշանակությունը ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 6) ճիշտ է ներկայացնում կարդանային փոխանցման նշանակությունը, ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը, 7) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով հնարավոր անսարքությունները, 8) ճիշտ է ստուգում յուղի մակարդակը փոխանցումների տուփում և փոխարինում յուղը, 9) ճիշտ է ներկայացնում տանող կամրջակի նշանակությունը և աշխատանքը, 10) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի տանող կամրջակի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը,առանձին հանգույցների(գլխավոր փոխանցիչ, դիֆերենցիալ, վերջնային փոխանցիչներ, դիֆերենցիալի բլոկավորմանմեխանիզմ) նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքը, 11) ճիշտ է ներկայացնում բաշխիչ-բաժանիչ տուփի նշանակությունը և աշխատանքը, 12) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով տանող կամրջակի հնարավոր անսարքությունները,

		13) ճիշտ է կարգավորում բացակը տանող լիսեռի առանցքակալներում և կոնական ատամնանվի ատամների միջև:
241.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել առաջադրված տրակտորի շարժահաղորդակի տարբեր մեխանիզմների, ագրեգատների և հանգույցների կառուցվածքը և աշխատանքը, գնահատել հնարավոր անսարքությունները և վերացնել դրանք, կարգավորել բացակների մեծությունները առաջադրված հանգույցներում, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը առաջադրված ժամանակահատվածում ճիշտ է ներկայացրել շարժահաղորդակի տարբեր մեխանիզմների, ագրեգատների և հանգույցների կառուցվածքը և աշխատանքը, նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է գնահատել շարժահաղորդակի առաջադրված մեխանիզմի կամ ագրեգատի հնարավոր անսարքությունները, ճիշտ է կատարել դրանց վերացումը, բացակների կարգավորման աշխատանքները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
242.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ կցորդիչի, փոխանցումների և բաշխիչ տուփի, տանող կամրջակի ընդհանուր կառուցվածքի և աշխատանքի վերաբերյալ, կարողություններ արտաքին արտահայտումներով որոշելու հնարավոր անսարքությունները, և կարգավորելու դրանք: Ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, կցորդիչի, փոխանցումների և բաշխիչ տուփերի, տանող կամրջակի ստենդներ, մոդելներ և իրական նմուշներ, տարբեր մեքենամասեր և հանգույցներ, չափիչ և կարգավորման գործիքներ, սարքավորումներ:
243.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 6 ժամ, գործնական աշխատանք 14 ժամ
244.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել անիվավոր տրակտորի ընթացքային մասը
245.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի ընթացքային մասի նշանակությունը , 2) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի ընթացքային մասի առանձին հանգույցների(կմախք, կախոց, անիվներ) նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքը, 3) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով ընթացքային մասի հանգույցների հնարավոր անսարքությունները,

		4) ճիշտ է որոշում անիվների տեղակայման անկյունները, 5) ճիշտ է որոշում և կարգավորում ճնշումը դողերում:
246.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել առաջադրված տրակտորի ընթացքային մասի կառուցվածքը և աշխատանքը, գնահատել հնարավոր անսարքությունները, կարգավորել անիվների տեղակայման անկյունները և ճնշումը դողերում, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է ներկայացրել տրակտորի ընթացքային մասի կառուցվածքը և աշխատանքը, նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է գնահատել առաջադրված տրակտորի ընթացքային մասի հնարավոր անսարքությունները, ճիշտ է կատարել անիվների տեղակայման անկյունների և դողերում ճնշման կարգավորման աշխատանքները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
247.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ տրակտորի ընթացքային մասի կառուցվածքի և աշխատանքի վերաբերյալ, կարողություններ արտաքին արտահայտումներով որոշելու հնարավոր անսարքությունները, և կարգավորելու դրանք: Ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսումնական գրականություն, դիտակտիվ նյութեր, ընթասքային մասի ստենդներ, մոդելներ և իրական նմուշներ, տարբեր մեքենամասեր և հանգույցներ, չափիչ և կարգավորման գործիքներ, սարքավորումներ, ուսումնական տրակտոր:
248.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
249.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել անիվավոր տրակտորի ղեկային կառավարումը
250.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի ղեկային կառավարման նշանակությունը, հիմնական տեսակները և դրանց աշխատանքի առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի ղեկի մեխանիզմի կառուցվածքը, 3) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով ղեկային կառավարման հնարավոր անսարքությունները, 4) ճիշտ է կարգավորում ղեկի ձգաձողերի հողակապային միացությունները, 5) ճիշտ է կարգավորում ղեկի ազատ շարժը (ընթացքը):

251.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել առաջադրված տրակտորի ղեկային կառավարման կառուցվածքը և աշխատանքը, գնահատել հնարավոր անսարքությունները և կարգավորել ղեկի ձգաձողերի հողակապերը, ղեկի ազատ շարժը, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է ներկայացրել ղեկային կառավարման կառուցվածքը և աշխատանքը, նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է գնահատել առաջադրված տրակտորի ղեկային կառավարման հնարավոր անսարքությունները, ճիշտ է կատարել ղեկի ձգաձողերի հողակապերի միացությունների և ղեկի ազատ շարժի կարգավորման աշխատանքները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
252.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Այդ պարապմունքների համար նպատակահարմար է օգտագործել պլակատներ, սխեմաներ, մեթոդական ցուցումներ, մասնագիտական գրականություն, ղեկային վարման մեխանիզմների և շարժաբեռների մոդելներ, ղեկանիվի պարապ ճոճքի մեծության կարգաբերման համար կիրառվող գործիքներ և սարքեր:
253.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
254.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել անիվավոր տրակտորի և կցանքի արգելակային համակարգերը
255.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի արգելակային համակարգի նշանակությունը և տեսակները , 2) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի արգելակային մեխանիզմի տեսակները և ընդհանուր կառուցվածքը և դրանց աշխատանքի առանձնահատկությունները, 3) ճիշտ է ներկայացնում անիվավոր տրակտորի արգելակային շարժաբեռի տեսակները և ընդհանուր կառուցվածքը և աշխատանքի առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում կցանքի արգելակների շարժաբեռի կառուցվածքը և աշխատանքը, 5) ճիշտ է որոշում արտաքին արտահայտումներով արգելակային համակարգի հնարավոր անսարքությունները, 6) ճիշտ է կարգավորում արգելակի ոտնակի ազատ ընթացքը, 7) ճիշտ է կարգավորում արգելակային կոճղակի և թմբուկի միջև բացակը:
256.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել

		առաջադրված տրակտորի արգելակային համակարգի կառուցվածքը և աշխատանքը, գնահատել հնարավոր անսարքությունները և կարգավորել ոտնակի ազատ ընթացքը և բացակը կոճղակի վերդիրների և թմբուկի միջև, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է ներկայացրել արգելակային համակարգի կառուցվածքը և աշխատանքը, նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է գնահատել առաջադրված տրակտորի արգելակային համակարգի հնարավոր անսարքությունները, ճիշտ է կատարել ոտնակի ազատ ընթացքի, կոճղակի վերդիրների և թմբուկի միջև բացակի կարգավորման աշխատանքները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
257.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի արգելակային համակարգի ստենդներ, դրա առանձին ագրեգատների, հանգույցների, մասերի նմուշներ և մոդելներ, կարգավորիչ գործիքների լրակազմեր, ուսումնական տրակտոր, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ, տեսաֆիլմեր, ուսումնական գրականություն:
258.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
259.	Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել տրակտորի աշխատանքային սարքավորումները
260.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կախովի հիդրավլիկական համակարգի ընդհանուր կառուցվածքը և հիմնական մասերը, 2) ճիշտ է ներկայացնում տրակտորի հիդրավլիկական համակարգի հնարավոր անսարքությունները արտաքին արտահայտումներով, 3) ճիշտ է կատարում տրակտորի հիդրավլիկական համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքները, 4) ճիշտ կարգավորում հիդրոգլանի ընթացքը, 5) ճիշտ է ներկայացնում կախովի հիդրավլիկական համակարգի բաշխիչի կառուցվածքը, 6) ճիշտ է գործարկում բաշխիչը, 7) ճիշտ է ներկայացնում տանող անիվների լրաբեռնիչների նշանակությունը և կառուցվածքը, 8) ճիշտ է գործարկում լրաբեռնիչները,

		9) ճիշտ է ներկայացնում տանող կախոցի մեխանիզմի նշանակությունը և կառուցվածքը, 10) ճիշտ է ներկայացնում կցման սարքավորման նշանակությունը և կառուցվածքը, 11) ճիշտ է ներկայացնում հզորության փոխանցման տուփի ընդհանուր կառուցվածքը և աշխատանքը:
261.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել առաջադրված տրակտորի հիդրավլիկական համակագարի և աշխատանքային սարքավորումների կառուցվածքը, կատարել հիդրավլիկական համակարգի և աշխատանքային սարքավորումների տեխնիկական սպասարկման աշխատանքները, ճիշտ գնահատել հնարավոր անսարքությունները և կատարել ընթացիկ նորոգման աշխատանքները, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է կատարել առաջադրված տրակտորի հիդրավլիկական համակագարի և աշխատանքային սարքավորումների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
262.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի հիդրավլիկ կախման համակարգի աշխատանքային սարքավորումների ստենդներ, դրա առանձին հանգույցների, մասերի նմուշներ և մոդելներ, կարգավորիչ գործիքների լրակազմեր, ուսումնական տրակտոր, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ, տեսաֆիլմեր:
263.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 4 ժամ, գործնական աշխատանք՝ 6 ժամ
264.	Ուսումնառության արդյունք 7	Ներկայացնել տրակտորների տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման գործընթացները
265.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տրակտորների տեխնիկական սպասարկման գործընթացները, 2) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկումների դերը և նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման տեսակները, դրանց կատարման ժամկետները և պարբերականությունը,

		4) ճիշտ է ներկայացնում տեխնիկական սպասարկման առավել բարդ գործողությունները, 5) ճիշտ է ներկայացնում տրակտորների տեխնիկական սպասարկման աշխատանքները՝ ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ և միջսեզոնային տեխնիկական սպասարկումներ և ընթացիկ նորոգման աշխատանքներ, 6) ճիշտ է ներկայացնում տրակտորների ընթացիկ նորոգման աշխատանքները, 7) ճիշտ է ներկայացնում տրակտորի տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքներին առընչվող փաստաթղթերի անհրաժեշտ ձևակերպումները և լրացումները:
266.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիմնա վրա: Սովորողին կառաջադրվեն հստակ ներկայացնել և կատարել առաջադրված տրակտորի ամենօրյա, 1-ին, 2-րդ, 3-րդ կամ միջսեզոնային տեխնիկական սպասարկման աշխատանքները, առաջադրված համակարգի, ագրեգատի կամ մեխանիզմի ընթացիկ նորոգման աշխատանքները, կիրառելով տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման տարբեր տեխնիկական միջոցներ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը նորմավորված ժամանակահատվածում ճիշտ է կատարել առաջադրված տեխնիկական սպասարկման և ընթացիկ նորոգման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացները, աշխատանքի անվտանգության պահանջների պահպանումը պարտադիր պայման է:
267.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի տարբեր համակարգերի, մեխանիզմների, հանգույցների և սարքավորումների ստենդներ, պլակատներ, ուսումնական գրականություն, փականագործական, էլեկտրատեխնիկական, չափիչ և կարգավորիչ գործիքների լրակազմեր, սարքավորումներ, աշխատանքի անվտանգության և հակահրդեհային անվտանգության հրահանգներ, տեխնիկական միջոցներ:
268.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 4 ժամ Գործնական աշխատանք 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՐԱԿՏՈՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
269.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-011
270.	Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել տրակտորի վարելու գործնական կարողություններ և հմտություններ:
271.	Մոդուլի տևողությունը	24 ժամ
272.	Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՄՍՓ-3-13-007 «Ճանապարհային երթևեկության

		կանոններ» մոդուլը:
273.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է՝ 1) ներկայացնի տրակտորի խցիկում տեղակայված կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը, 2) գործարկի շարժիչը, 3) վարեի տրակտորը ուղիղով և շրջադարձերով, 4) վարեի տրակտորը դժվար ճանապարհային պայմաններում և բարձր արագություններով, 5) վարեի տրակտորը հետընթացքով, անցումը դարբասով, մանևրումը սահմանափակ անցատեղերով, 6) վարեի տրակտորը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով:
274.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
275.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տրակտորի խցիկում տեղակայված կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը
276.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կառավարման օրգանների նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը:
277.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողին կտրվի մի շարք առաջադրանքներ և կպահանջվի ներկայացնել կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակությունը: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար սովորողը կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:
278.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ կառավարման օրգանների և սարքերի վահանակի վրա տեղադրված ցուցիչների նշանակության վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի կառավարման օրգանների և սարքերի վահանակի

		ստենդներ, առանձին մեխանիզմներ, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, կարգավորման և չափիչ գործիքներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր:
279.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք 1 ժամ, Գործնական աշխատանք 2 ժամ
280.	Ուսումնառության արդյունք 2	Գործարկել շարժիչը
281.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է գործարկում գործարկման շարժիչը, 2) ճիշտ է գործարկում դիզելայն շարժիչը:
282.	Գնահատման միջոցը	Գիտելիքների ստուգումը կատարվում է հարց ու պատասխանի կամ թեսթերի միջոցով: Գիտելիքները ստուգելու նպատակով սովորողից կպահանջվի ներկայացնել գործարկման գործընթացը, այնուհետև սկզբից գործարկել գործարկման շարժիչը, ապա դիզելայն շարժիչը: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը կատարի բոլոր առաջադրված առաջադրանքները:
283.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ և կարողություններ շարժիչի գործարկման վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի շարժիչի գործող ստենդ, առանձին մեխանիզմներ, հանգույցներ, մեքենամասերի նմուշներ, կարգավորման և չափիչ գործիքներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր:
284.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 1 ժամ, գործնական աշխատանք՝ 2 ժամ
285.	Ուսումնառության արդյունք 3	Տրակտորի վարումը ուղիղով և շրջադարձերով
286.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տեղից շարժում տրակտորը ՝ մինչև շարժման սահուն սկիզբը, 2) ճիշտ է վարում է տրակտորը ուղիղով, 3) ճիշտ է կատարում աջ և ձախ շրջադարձեր:
287.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական կատարման հիման վրա: Սովորողից կպահանջվի սահուն տեղից շարժել տրակտորը՝ մինչև կայունացված շարժման սկիզբը, վարել տրակտորը ուղղագիծ, ապա աջ և ձախ շրջադարձերով: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը վարժ և հմտորեն է վարել տրակտորը:
288.	Մեթոդաբանությունը և	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ

	ռեսուրսները	կարողություններ տրակտորի ուղիղ և շրջադաձերով վարման: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի վարման գործող ստենդ, մասնագիտական գրականություն, պլակատներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր:
289.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական աշխատանք 4 ժամ
290.	Ուսումնառության արդյունք 4	Տրակտորի վարումը ճանապարհային և շահագործական տարբեր պայմաններում
291.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է վարում տրակտորը ճանապարհային տարբեր պայմաններում, 2) ճիշտ է վարում տրակտորը շահագործման տարբեր պայմաններում, 3) ճիշտ է վարում տրակտորը բարձր արագություններով, 4) ճիշտ է վարում է տրակտորը գիշերային ժամերին և տեսանելիության սահմանափակ պայմաններում :
292.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական կատարման հիման վրա: Սովորողից կպահանջվի սահուն վարել տրակտորը ճանապարհային և շահագործման տարբեր պայմաններում, բարձր արագություններով և գիշերվա ժամերին: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը վարժ և հմտորեն է վարել տրակտորը, երթևեկության անվտանգության կանոնների պահապանումը պարտադիր պահանջ է:
293.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ կարողություններ վարելու տրակտորը դժվար ճանապարհային պայմաններում և բարձր արագություններով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի վարման գործող ստենդ, մասնագիտական գրականություն, ճանապարհային երթևեկության անվտանգության պլակատներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր:
294.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական աշխատանք 4 ժամ
295.	Ուսումնառության արդյունք 5	Տրակտորի վարումը հետընթացքով, անցումը դարբասով, մանևրումը սահմանափակ անցատեղերով
296.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տեղից շարժում տրակտորը հետընթացքով՝մինչև ընթացքի սահունությունը, մոտեցնում հետընթացքով կախովի կամ կցովի մեքենային, 2) ճիշտ է անցնում պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով, 3) ճիշտ է վարում տրակտորը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված:
297.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական կատարման հիման վրա: Սովորողից կպահանջվի սահուն վարել

		տրակտորը՝ մասնավորապես. -տեղից սահուն շարժել տրակտորը, - տեղից սահուն շարժել տրակտորը հետընթացքով մինչև կայունացված շարժման սկիզբը, -սահուն մոտեցնել տրակտորը հետընթացքով կախովի կամ կցովի մեքենային, - կազմել ագրեգատ, - սահուն վարել տրակտորը պայմանական դարբասով առաջընթացքով և հետընթացքով, -սահուն վարել տրակտորը տարբեր գյուղատնտեսական մեքենաների հետ ագրեգատավորված, -վարել տրակտորը ուղղագիծ, աջ և ձախ շրջադարձերով: Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը վարժ և հմտորեն է վարել տրակտորը, անսխալ կատարել առաջադրանքները, երթևեկության անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր պահանջ է:
298.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ կարողություններ վարել տրակտորը հետընթացքով, անցումը դարբասով, մանևրումը սահմանափակ անցատեղերով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի վարման գործող ստենդ, մասնագիտական գրականություն, ճանապարհային երթևեկության անվտանգության պլակատներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր, տարբեր արգելքների նմուշներ և մոդելներ:
299.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական աշխատանք 6 ժամ
300.	Ուսումնառության արդյունք 6	Տրակտորի վարումը երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով:
	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է տրակտորով դուրս գալիս երթևեկության գոտի, 2) ճիշտ է անցնում երկաթուղային գծանցի հատումը, 3) ճիշտ է շարժվում տրանսպորտային հոսքում, 4) ճիշտ է անցնում տարբեր խաչմերուկներ, 5) ճիշտ է որոշում մոտեցող տրանսպորտային միջոցի արագությունը, 6) ճիշտ է կատարում տրակտորի դիրքավորումը և վերադիրքավորումը երթուղում՝ կախված ընտրված նպատակակետից և տրանսպորտային հոսքի ծանրաբեռնվածությունից,

		7) ճիշտ է իրականացնում միջանկյալ կանգառները և կանգառներից շարժումը երթի ժամանակ:
301.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է գործնական կատարման հիման վրա: Սովորողից կպահանջվի սահուն վարել տրակտորը ճանապարհային երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով: Սովորողից կպահանջվի սահուն վարել տրակտորը՝ մասնավորապես. -երթևեկության գոտի մտնելիս, -երկաթուղային գծանցը հատելիս, -տրանսպորտային տարբեր հոսքերում երթևեկելիս, -խաչմերուկները հատելիս, -տրանսպորտային հոսքերում վերադասվորվելիս, -կանգառներում կանգնելիս և կանգառներից շարժվելիս, Արդյունքը կհամարվի ձեռք բերված, եթե սովորողը վարժ և հմտորեն է վարել տրակտորը, անսխալ կատարել առաջադրանքները, երթևեկության անվտանգության կանոնների պահապանումը պարտադիր պահանջ է:
302.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով սովորողին տալ կարողություններ վարել տրակտորը ճանապարհային երթևեկության տարբեր ինտենսիվությամբ երթուղիներով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են դիտակտիկ նյութեր, տրակտորի վարման գործող ստենդ, մասնագիտական գրականություն, ճանապարհային երթևեկության անվտանգության պլակատներ, ուսումնական տրակտոր, տեսաֆիլմեր, ճանապարհների և փոխհատումների սխեմաներ, լուսաֆորների, գծանշումների, ճանապարհային նշանների նկարներ, տարբեր արգելքների նմուշներ և մոդելներ:
303.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական աշխատանք 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ»		
304.	Մոդուլի դասիչը	ԳՄՍՓ-3-13-012
305.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել հողի մշակման և պարարտացման մեքենաների կառուցվածքի, առանձին հանգույցների, մեխանիզմների աշխատանքի սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ, տեխնիկական սպասարկում և նորոգում

		կատարելու կարողություններ և հմտություններ:
306.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
307.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ սովորողը պետք է ուսումնասիրած լինի ԳՄՍՓ-3-13-008 <<Տիպային միացությունների և մեքենամասերի նորոգման ու վերականգման հմտություններ>> մոդուլը:
308.	Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք է ` 1) ներկայացնի հողի մշակման եղանակները, դասակարգի հողի հիմնական մշակման մեքենաները, ներկայացնի դրանց ընդհանուր կառուցվածքը, 2) դասակարգի հողի մակերեսային մշակման մեքենաները, ներկայացնի դրանց կառուցվածքը, 3) դասակարգի պարարտացման մեքենաները, ներկայացնի դրանց կառուցվածքը, 4) կատարի հողի հիմնական մշակման մեքենաների տեխնիկական սպասարկման, նորոգման և քանդման-հավաքման աշխատանքները, 5) կատարելի հողի պարարտացման մեքենաների տեխնիկական սպասարկումը, նորոգումը և հիմնական հանգույցների քանդում-հավաքումը:
309.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
310.	Ուսումնառության արդյունք 1	Դասկարգել հողի հիմնական մշակման մեքենաները (գութաններ, փխրիչներ և այլն), ներկայացնել դրանց կառուցվածքը, առանձին հանգույցների և մեքենամասերի նշանակությունը
311.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողի մեխանիկական մշակման եղանակները և կատարում է հողամշակման մեքենաների դասակարգում, 2) ճիշտ է ներկայացնում գութանի ընդհանուր կառուցվածքը, առանձին հանգույցների և մեքենամասերի (իրան, խոփ, թև, դաշտային տախտակ, նախագութանիկ, հողախորացուցիչ, դանակ, անիվներ, մշակման խորության կարգավորման մեխանիզմ) նշանակությունը, տեսակները և կարգավորումները, 3) ճիշտ է ներկայացնում հողի փխրիչների ընդհանուր կառուցվածքը, առանձին հանգույցների և մեքենամասերի (դանակ, դուր և այլն) նշանակությունը, կատարում մշակման խորության կարգավորում:
312.	Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիման վրա:

		Սովորողին կտրվի առնվազն 6 հարց հողի մշակաման եղանակների, հողամշակման մեքենաների դասակարգման , գութանի ընդհանուր կառուցվածքի, հողի փխրիչների ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանել հարցերի առնվազն 80%-ին և ճիշտ է կատարել կախովի գութանի կամ հողի փխրիչի նախապատրաստումը աշխատանքի և կարգավորումը, օգտագործելով համապատասխան գործիքներ և սարքեր: Անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը պարտադիր պահանջ է:
313.	Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են գութանների վերաբերյալ դիտակտիկ նյութեր, առանձին մասերի նմուշներ, պլակատներ, ուսումնական համապատասխան գրականություն, համապատասխան գործիքներ, սարքեր, հարմարանքներ և գութանի մոդել, նպատակահարմար է ունենալ իրական գութան:
314.	Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական պարապմունք՝ 2 ժամ, գործնական աշխատանք՝ 4 ժամ
315.	Ուսումնառության արդյունք 2	Դասկարգել հողի մակերեսային մշակման մեքենաները, ներկայացնել դրանց կառուցվածքը, առանձին հանգույցների և մեքենամասերի նշանակությունը
316.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հողի մակերեսային (լրացուցիչ) մշակման եղանակները և կատարում մակերեսային մշակման մեքենաների դասակարգում, 2) ճիշտ է ներկայացնում կուլտիվատորի ընդհանուր կառուցվածքը, առանձին մասերի (կանգնակ, թաթիկ, անիվներ, կարգավորման մեխանիզմ) նշանակությունը, տեսակները, կատարում մշակման խորության կարգավորում, 3) ճիշտ է ներկայացնում ցաքանների ընդհանուր կառուցվածքը և կատարում մշակման խորության կարգավորում, 4) ճիշտ է ներկայացնում երեսվարիչների տեսակները, ընդհանուր կառուցվածքը և կատարում մշակման խորության ու գրոհի անկյան (սկառակավոր երեսվարիչներ) կարգավորում, 5) ճիշտ է ներկայացնում ֆրեզերային հողամշակման մեքենաների կառուցվածքային առանձնահատկությունները և կարգավորման գործընթացները, 6) ճիշտ է ներկայացնում գլանվակների, կոշտջարդիչների տեսակները, ընդհանուր կառուցվածքը և խորության կարգավորումները:

